ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2015**թ.** **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԷԴԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն վաստակաշատ շինարար Էդիկ Հակոբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կորյունի փողոց հ.1 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԷԴԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վաստակաշատ շինարար Էդիկ Հակոբյանը ծնվել է 1935թ. Երևանում: 1958թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի շինարարական ֆակուլտետը և որպես երիտասարդ մասնագետ ուղարկվել է աշխատելու Չեչենո-Ինգուշական Ինքնավար Հանրապետության մասնագիտացված շինմոնտաժային վարչություն: Վերադառնալով Երևան՝ 1960-1975թթ. աշխատել է «Երքիմշին» տրեստում, ղեկավարել է «Նաիրիտ» քիմկոմբինատի մի շարք օբյեկտների շինարարությունը: Նա աշխատանքային բարձր նվաճումների և հմուտ ղեկավարման համար 1975թ. առաջադրվել է Երքաղգործկոմի «Երկոմունշին» գլխավոր վարչության պետի պաշտոնում:

Էդիկ Հակոբյանը 1981թ. նշանակվել է Հայաստանի արդյունաբերական շինարարության նախարարի տեղակալ «Երևանշին» շինմոնտաժային միավորման տնօրենի պաշտոնում:

1990-1997թթ. Էդիկ Հակոբյանն աշխատել է Երքաղգործկոմի «Քաղշին» շինմոնտաժային միավորման պետի պաշտոնում: 1998-2000թթ. ղեկավարել է «Պրոմեթևս-Քիմարդ» ընկերության շինարարության պետի, գլխավոր տնօրենի առաջին տեղակալի պաշտոնը: 2001-2000թթ. նշանակվել է «Ռուսհայհաց» ընկերության շինարարության պետի պաշտոնում:

Էդիկ Հակոբյանը երկար տարիներ եղել է նաև Երևանի քաղխորհրդի պատգամավոր, գործկոմի անդամ, արժանացել է «ԽՍՀՄ նախարարների խորհրդի» մրցանակին, պարգևատրվել է «Աշխատանքային կարմիր դրոշի», «Ժողովուրդների բարեկամության» շքանշաններով, «Աշխատանքի վետերան», «Քաջարի աշխատանքի համար» կրծքանշաններով և մի շարք պատվոգրերով:

Վաստակաշատ շինարար Էդիկ Հակոբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կորյունի փողոց հ.1 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել ՀՀ քաղաքաշինության նախարար Ն. Սարգսյանի, ՀՀ շինարարների միության նախագահ Գ. Գալստյանի և ՀՀ ճարտարապետների միության նախագահ Մ. Մինասյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԷԴԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Էդիկ Հակոբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԷԴԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Էդիկ Հակոբյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ